Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանատնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2023 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող է:

Շուրջ երեք տասնյակ գիտական, վերլուծական հոդվածների և 3 մենագրության հեղինակ է:

https://orcid.org/0000-0001-9014-5892

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԴԱՍԵՐԸ. ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ*

DOI: 10.52174/2579-2989_2024.1-102

Ոչ մի մեծ նվաճում երբեք ձեռք չի բերվել առանց վտանգների:

Նիկոլո Մաքիավելի

Հիմնաբառեր. *Կիլիկիայի թագավորություն, տնտեսական քաղաքականություն, միջազգային առևտուր, առևտրային խաչմերուկ, տարանցիկ ուղիներ*

Իր աշխարհագրական դիրքով Կիլիկիայի հայկական պետությունն Արևելք-Արևմուտք ցամաքային ու ծովային առևտրային ճանապարհների խաչմերուկում էր, այսինքն՝ տարանցիկ հանգրվանային դերակատարում ուներ: Հետևապես՝ իշխանապետության, իսկ ապա նաև թագավորության տնտեսական քաղաքականության ռազմավարության մշակման ու իրականացման համատեքստում այդ գործոնը կարևորագույնն էր:

Հատկապես Կիլիկիայի թագավորության ժամանակաշրջանում Արևելքը Միջերկրական ծովով եվրոպական պետությունների ու քաղաքների հետ կապող առևտրային ուղիների հիմնական նավահանգիստը կիլիկյան Այասն էր, որի տնտեսական նշանակությունն արժևորվում էր ինչպես աշխարհաքաղաքական, այնպես էլ ռազմաքաղաքական տեսանկյունից: Կիլիկյան Հայաստանի խաչմերուկային դերը հատկապես կարևորվեց Խաչակրաց արշավանքների ժամանակահատվածում, երբ ռազմական գործողություններին մասնակցող զինվորների և նրանց կենսապահովման համար անհրաժեշտ բեռների փոխադրումը (սնունդ-զենք-զինամթերք) սկսեց իրագործվել միջերկրածովյան ճանապարհով: Այս ծովային ուղու անխափան շահագործմամբ խիստ շահագրգիռ էին առևտրային նավատորմերով հայտնի իտալական մի շարք պետություններ (Վենետիկ, Ջենովա), ինչպես

* *Սկիզբը՝ նախորդ համարներում.*
«Ամբերդ» տեղեկագիր 2023/1 (20) (https://asue.am/upload/files/amberd/2023-year-1/12.pdf)
«Ամբերդ» տեղեկագիր 2023/2 (21) (https://asue.am/upload/files/amberd/ 2023-year-2/15.pdf)
«Ամբերդ» տեղեկագիր 2023/3 (22) (https://asue.am/upload/files/amberd/ 2023-year-3/11.pdf)
«Ամբերդ» տեղեկագիր 2023/4 (23) (https://asue.am/upload/files/amberd/ 2023-year-4/14.pdf)

նաև հարավֆրանսիական քաղաքների (Մարսել, Նարբոն, Մոնպելիե) վաճառական խմբերը:

Հոդվածաշարի հինգերորդ մասում Կիլիկյան Հայաստանի տնտեսական քաղաքականությունն ուսումնասիրվել է՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ ժամանակահատվածում Արևմուտք-Արևելք աշխարհաքաղաքական, ռազմական և տնտեսական գործընթացները միտված էին «խաղի» նոր կանոնների ձևավորմանը: Միաժամանակ, փորձ է արվել բացահայտելու պետության վարած արտաքին և ներքին տնտեսական քաղաքականությունից բխող ռազմավարական ու մարտավարական քայլերի տրամաբանությունը, ուղղվածությունն ու նպատակային շեշտադրումը՝ վեր հանելով ինչպես դրական, այնպես էլ բացասական միտումները:

Տնտեսական քաղաքականության զուգահեռներ

Թվում է՝ արտաքին ու ներքին տնտեսական քաղաքականության սկզբունքների ու դրանց իրագործման առումով, Կիլիկիայի իշխանապետությունից/թագավորությունից դասեր քաղելու ակնառու եզրեր կամ զուգահեռներ չեն կարող լինել, քանի որ խոսքը նախ՝ տասը դար առաջ գոյություն ունեցած պետական միավորի, ինչպես նաև միապետության մասին է, որի պարագայում պետական տնտեսական համակարգը բոլորովին այլ կառուցվածք պետք է ունենար: Բայց, ինչպես իմացանք հոդվածաշարի նախորդ հատվածից, անգամ թագավորության դեպքում գործում էին օրենսդիր ու խորհրդակցական մարմինը՝ Պարոնների ժողովը, գործադիր մարմինը՝ իր գործակալություններով, և տնտեսության հիմքում պետական (արքունական, թագավորական) ու մասնավոր սեփականության համադրելի համակարգն էր: Որքան էլ տարօրինակ թվա, սակայն զուգահեռները սկսվում են հենց այս մեկնակետից, քանի որ նմանօրինակ սկզբունքով է կայացել նաև Հայաստանի երրորդ հանրապետության տնտեսական համակարգը:

Նախագահ, օրենսդիր իշխանություն, գործադիր իշխանություն. այս եռանկյունում է գործում մերօրյա Հայաստանի տընտեսական համակարգը, որի կառուցման հիմքում անկախության արդյունքում պետությանը «շնորհված» գույքի (հող, արդյունաբերական, գյուղատնտեսական, արտադրական կազմակերպություններ) կարևորագույն ու որոշիչ մասի սեփականատիրոջ արագացված փոփոխությունն էր: Վերջինս իրականացավ հիմնականում դրսից պարտադրված ու ներսում ոչ լրիվ հաշվարկված քայլերով, և յոթ տասնամյակի ընթացքում ստեղծված համաժողովրդական սեփականության մեծ մասը դուրս եկավ պետության վերահսկման ու կարգավորման դաշտից՝ դառնալով օտարված՝ բառիս բուն և փոխաբերական իմաստով:

Կիլիկիայի պետականակերտման դեպքում նոր տնտեսակարգի կառուցման համար, ըստ էության, նույնպես կիրառվել է գույքի նոր սեփականատերերի ինստիտուտի կայացման արագացված գործընթացը: Դրա հիմնական պատճառն այն էր, որ հայկական այլընտրանքային պետական միավորը, ի դեմս Կիլիկիայի հայկական պետության, բացի պատմական տարածքներից, ուներ նաև որոշակի զավթված տարածքներ, ուստի, հատկապես զավթված հողատարածքների ու գույքի տեսանկյունից, շատ արագ պետք է ձեռք բերեր սեփականատեր: Այսինքն՝ սեփականապատկան տարածքներն ու գույքն ամրագրելու գործընթացում կենսական անհրաժեշտություն էր արքունիքի, եկեղեցու, խոշոր սեփականատերերի (բերդաքաղաքների, ագարակների, հողի, արոտավայրերի իշխանական կալվածատերեր, վասալներ), ինչպես նաև գյուղացիական համայնքների ակտիվ ու փոխշահավետ համագործակցությունը: Այս գործընթացի արդյունքում, բացառությամբ արքունիքի ու եկեղեցու, գույքատերերի մասնավոր հատվածը ապահովելու էր արդյունավետ վերջնարդյունք, ինչին զուգահեռ՝ ամրանալու էր պետությունը ու արժևորվելու դրա կարգավորիչ դերը՝ տնտեսական համակարգի կայացման առումով:

Արձանագրենք, որ տվյալ պատմական

ժամանակահատվածում պետության կարգավորիչ դերի ամրապնդումն իր բնույթով նորարարական էր, քանի որ մինչ այդ հայոց թագավորությունների կենսագործունեության սկզբունքը հիմնովին այլ էր՝ միապետությանը հարիր խիստ սահմանումներով ու կանոնակարգով: Ի տարբերություն նախորդ հայկական պետականությունների, Կիլիկիայում տնտեսական համակարգի ակտիվ դերակատարներից մեկը դարձավ համայնքը, որը պետականակերտման կենսընթացքի սկզբնամասում, անգամ ավատատիրական համակարգի գոյության պայմաններում, ձևավորվեց՝ չմիակցվելով որևէ կալվածքի՝ լիներ դա արքունական, եկեղեցապատկան, թե իշխանական[1]: Եվ սա, թերևս, տնտեսական համակարգի կայացման առումով, կարևորագույն սկզբունքներից մեկն էր, քանի որ տվյալ ժամանակաշրջանում ինքնավար համայնքներում որակական ու թռիչքային զարգացում ապրեցին արհեստագործությունն ու գյուղատնտեսությունը, որոնք յուրաքանչյուր պետության տնտեսության հիմքերի հիմքն էին: Ընդ որում, ինքնավար համայնքներում ընդգրկված, տնտեսական գործունեություն ծավալող միավորները մի որոշակի ժամանակահատված ազատվեցին հարկերից, ինչը նրանց հնարավորություն տվեց կայանալու և ամրանալու, հետագայում դառնալու կայուն եկամտով ապահովված հարկատուներ: Այսինքն, չնայած այն հանգամանքին, որ և՛ արհեստագործը, և՛ գյուղացին ավատատիրա կան[2] բուրգի ամենաստորին հարթակում էին, այդուհանդերձ, պետության վարած քաղաքականությունն ուղղված էր նրան, որ ի սկզբանե նրանք չխեղդվեին հարկային բեռի ու պարտքերի տակ: Ցավոք, այս կարևոր դասն անտեսվել է և չի կիրառվում մերօրյա քաղաքական ու պետական այրերի կողմից անկախ տնտեսական համակարգի ձևավորման գործընթացում՝ ստվեր գցելով գույքի ու հողի սեփականաշնորհման քաղաքականության վրա, նոր սեփականատերերի մեծամասնությանը դարձնելով հարկային և ապա վարկային բեռից կախյալ, ստիպելով նրան ոչ շահեկան գներով վաճառել որպես սեփականություն շնորհված գույքի ու հողատարածքների հիմնական արժեքավոր մասը:

Փորձենք զուգահեռներ տանել նաև միջազգային առևտրային հարաբերությունների առումով՝ անդրադառնալով դրանց «նախակարապետ» հանդիսացող յուրօրինակ գործընթացներին, երբ պետությունը ոչ միայն նպաստում էր օտարերկրյա խոշոր տնտեսական միավորների ներդրումային ցանկությունների իրականացմանն ու դրանից բխող ազատ շուկայական հարաբերությունների կայացմանը, այլև դրանք կարգավորում միջպետական համապատասխան համաձայնագրերով, ինչպես նաև վարվող հարկային ու մաքսային ճկուն քաղաքականությամբ:

Հաջորդ զուգահեռը, որ կուզեինք տանել, մասնավոր հատվածում «խաղի կանոնների» սահմանման առումով պետության վարած քաղաքականության առնչությամբ է: Կիլիկյան պետությունը, իրավունքների որոշակի պաշտպանական կառուցակարգեր կյանքի կոչելով, սոցիալական բազմաշերտ տիրույթում գերակա պահելով մասնավոր համակարգի ձևավորման նկատմամբ վերահսկողությունը, իրավական նախադրյալներ էր ստեղծել հասարակության շերտերի միջև եղած անջրպետը հնարավորինս վերացնելու ուղղությամբ: Միաժամանակ, նրա կարգավորման տիրույթում էին նվիրատվությամբ շնորհված (ապապետականացված) գույքի վերադարձի կառուցակարգերը[3]: Մինչդեռ մեր օրերում վարվող տնտեսական քաղաքականության մեջ այս գործընթացները մի յուրօրինակ «աքիլլեսյան գարշապար» են: Ցավոք, մինչ օրս առկա չեն օրենսդրական համապատասխան սահմանումներ ու ընթացակարգեր, որոնք հնարավորություն կընձեռեն ազգայնացնելու շուկայականից էականորեն ցածր արժեքով, հիմնականում սեփականաշնորհման սերտիֆիկատով ձեռք բերված ու արդեն մի քանի տասնամյակ անգործության մատնված ու հանրային արդյունքի ձևավորմանը չմասնակցող

[1] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 413-414:
[2] Ավատատիրական՝ ֆեոդալական:
[3] Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում ԺԲ և ԺԴ դարերում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 54:

սեփականաշնորհված գույքը: Պետք է արձանագրենք, որ Կիլիկիայի հայկական պետությունում այս հարցը կանոնակարգված էր հենց օրենքների ու արքունիքի կողմից վարվող քաղաքականության շնորհիվ:

Ուսանելի է նաև այն, որ թեև տնտեսական քաղաքականությունը մենաշնորհային դեր ուներ ռազմավարական հայեցակարգում, սակայն դրա ամեն քայլը միտված էր յուրաքանչյուր ոլորտի ապամոնոպոլացմանը: Ազատ մրցակցությունը հատկապես օտարերկրյա ներդրումների հարթակում հանգեցնում էր տնտեսության զարգացմանը, որը նույնպես տվյալ ժամանակահատվածի համար նորարարական մոտեցում էր:

Արդյունքում, ավատատիրական համակարգի գոյությանը զուգահեռ, ակտիվ գործում և ամրանում էր պետության գանձարան-համակարգը, որը նրա ինքնիշխանության ու հզորացման կարևոր բաղադրիչ հանդիսացող բանակի պահպանման ծախսերի հիմնական ֆինանսական աղբյուրն էր:

Հողատիրության յուրահատկությունները. խաչակիր օրդենների մուտքը տարածաշրջան

Իր բնույթով լինելով ավատատիրական պետություն՝ Կիլիկյան Հայաստանը, որոշակի առումով, վարում էր արևմտամետ ուղղվածության հողային քաղաքականություն, և դա՝ մեկ պարզ ու օբյեկտիվ պատճառով: Արևմուտքի ու հատկապես խաչակիրների ներխուժումը տարածաշրջան յուրօրինակ «քաղաքական կատալիզատոր» էր, որն արագացրեց Կիլիկյան Հայաստանի իշխանապետական ինստիտուտի ստեղծումը, իսկ ապա նաև վերջինիս վերափոխումը թագավորության: Պատմականորեն արձանագրված փաստ է, որ Լևոն Բ Մեծագործի թագավորական թագի արժեքը խաչակրաց գաղափարախոսության ընդունումն էր, և հենց արևմտյան կառավարման մոդելի ընդօրինակման արդյունքում է, որ Գերմանիայի Հենրիխ VI կայսրի անմիջական մասնակցությամբ իշխանապետ Լևոնը դարձավ թագավոր (1198 թ.)[4]: Եվ արդեն որպես թագավոր՝ Հռոմի Իննոկենտիոս պապին ուղղված նամակում (23-ը մայիսի, 1199 թ.) նա առաջին անգամ օգտագործեց «Թագավոր ամենայն Հայոց» (Rex omnium Armeniorum) տիտղոսը[5]: Ինքնին հասկանալի է, որ Խաչակրաց արշավանքները, լինելով եվրոպական պետությունների նախաձեռնած աշխարհաքաղաքական ծրագրի որոշիչ մասը, միայն կրոնական բաղադրիչով չէ, որ ներկայանում էին տարածաշրջանում: Դրանց միջոցով, ըստ էության, տրամաբանական քայլերով փորձ էր արվում տարածաշրջանում հաստատելու Արևմուտքի տնտեսական գերիշխանությունը, իսկ Հայկական Կիլիկիան այդ առումով ամենահարմար կառուցվածքային միավորն էր, որին, ինչպես ցույց տվեց պատմությունը, շուրջ երկուսուկես դար վերապահվելու էր Արևմուտք-Արևելք առևտրատնտեսական տարանցման հիմնական «կամուրջ» կամ «բորսայական» հարթակ լինելու կարևոր դերը: Ընդ որում, հավաքական Արևմուտքն իր ծրագրի անշրջելիությունը փորձում էր ապահովել՝ ձևավորելով արևմտամետ խմբեր Կիլիկիայի թագավորության ներսում: Այս քաղաքականությունը տվեց իր պտուղները, քանի որ արևմտամետները Պարոնների ժողովի, իսկ ապա նաև արքունիքի միջոցով պետական գույքի կառավարման ոլորտում իրականացրին օրենսդրական փոփոխություններ, որոնց կիրարկման արդյունքում թագավորության վերահսկելի հողատարածքներում սկսեցին իրենց գործունեությունը ծավալել Արևմուտքը ներկայացնող հողատերերը, սկզբում՝ խաչակիր օրդենները, ապա նաև իտալական պետությունների խոշոր առևտրային մագնատները: Այս գործընթացը բխում էր պետության շահերից, քանի որ իշխանապետությունը, ապա նաև թագավորությունը պարբերաբար զգում էր զորքի, զենքի ու ֆինանսական միջոցների կարիք, իսկ այդպիսի օժանդակությունն իր գինն ուներ: Ուստի Կիլիկիայի թագավորությունը հատկապես իր հողատիրական օրենսդրությունը հաստատեց մի սկզբ-

[4] Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 2007, էջ 187-188:
[5] Նույն տեղում, էջ 198:

բունքով, ըստ որի՝ արևմտյան մասնակցայնությունը պետության ամրապնդմանը, պաշտպանությանն ու տնտեսական զարգացմանը պետք է գնահատվեր նյութական, իսկ ավելի ստույգ՝ անշարժ գույքի, տվյալ դեպքում՝ հողի նվիրատվության տեսքով: Սակայն, դա չէր համարվում գույքի վերջնական օտարում, քանի որ հողն ու դրա վրայի անշարժ գույքը ոչ թե սեփականաշնորհվում, այլ տիրապետման էին հանձնվում օտարերկրացուն՝ որպես վերջինիս ռազմական կամ գործարար ծառայությունների դիմաց փոխհատուցում: Հատկապես ուշագրավ է այն փաստը, որ շատ դեպքերում հողը նվիրաբերվում էր ոչ թե որոշակի անձի, այլ վերջինիս թիկունքում կանգնած կազմակերպությանը: Խաչակրաց արշավանքների պարագայում այդ կազմակերպությունները կրոնական շղարշով հանդես եկող ռազմական միավորներն էին, որոնք ներկայանում էին որպես օրդեններ[6]:

Կիլիկիայի թագավորությունում հողատիրության հիմնական ձևերը չորսն էին՝ արքունական, իշխանական, եկեղեցապատկան և համայնքային[7], ու այսպիսի կառուցվածքն արևմտյան մոդելի նմանակն էր: Խաչակիր օրդենների պարագայում «աշխատում» էր իշխանական հողատիրության սկզբունքը, երբ, որոշակի ռազմական կամ գործարարական գործառույթներով պայմանավորված, սուբյեկտին՝ պայմանական հողատիրության սկզբունքով, հող էր տրամադրվում, որն անգամ կարող էր ժառանգության իրավունքով անցնել հորից զավակին, սակայն երբևէ չէր կարող համարվել հողը ստացողի սեփականությունը, քանի որ տվյալ պաշտոնը կամ ծառայությունը դադարեցնելու դեպքում հողն ինքնաբերաբար վերադարձվում էր պետությանը:

Հողատիրության և, ընդհանրապես, պետության տնտեսական ու վարչական գործառույթների հետ կապված նորամուծությունները տեսանելի դարձան մասնավորապես Լևոն Բ Մեծագործի իշխանության օրոք: Դրանք իրենց բնույթով տվյալ ժամանակահատվածի համար առաջադիմական ու ռիսկային նախաձեռնություններ էին: Ու եթե արքունական և եկեղեցապատկան հողերի կամ անշարժ գույքի դեպքում, կարծես թե, ամեն ինչ ընթանում էր դասական ու անփոփոխ սցենարով, ապա իշխանականի պարագայում, ինչպես տեսանք, յուրահատուկ , իսկ համայնքային հողատիրության դեպքում՝ էլ ավելի առաջադիմական լուծումներ էին տրվում մի շարք սոցիալական խնդիրների: Մասնավորապես՝ համայնքապատկան հողերը գյուղացիներին տրվում էին որոշակի պայմաններով օգտագործման իրավունքով, իսկ տնամերձ հողերը՝ սեփականության իրավունքով: Այս մոտեցումը հանգեցնում էր հասարակության նոր շերտի՝ միջին խավի ձևավորմանն ու կայուն զարգացմանը:

Եթե վերադառնանք օրդենների հետ ձևավորվող քաղաքական ու տնտեսական հարաբերություններին, ապա այս դեպքում ռիսկերն ավելի քան տեսանելի էին, քանի որ առաջանում էր ներքին անառողջ մրցակցություն, ու դա արտահայտվում էր ինչպես օրդենների վարքագծում, այնպես էլ նրանց կայացրած որոշումներում, որոնք վերաբերում էին այս կամ այն տնտեսական խնդրին: Սակայն, անհրաժեշտ է նաև ընդգծել, որ օրդենների նկատմամբ վարվող քաղաքականությունը ներկայացնում էր տեղի իշխանների՝ հայրենատեր բերդատերերի «ախորժակը» մեղմող մի յուրօրինակ «մտրակ», որն իր բնույթով նաև կանխարգելիչ դեր էր խաղում ներիշխանական ներքին խժդժությունները ճնշելու (մեղմելու) առումով: Ինչ վերաբերում է խաչակիր օրդեններին, ապա փաստաթղթային ամրագրմամբ դրանք հոգևորասպետական բնույթի, քրիստոնեության պաշտպանության առաքելությամբ գործող կառույցներ էին, սակայն նրանց գործողությունների հետահայաց վերլուծությունն ակնառու է դարձնում այն իրողությունը, որ նմանօրինակ կազմակերպու-

[6] Բոռնազյան Ս. Վ., Խաչակիր օրդենների և Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական առնչությունների պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», էջ 175, https://arar.sci.am/dlibra/publication/187923/edition/170620/content

[7] Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը. հասարակական-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում, https://akunq.net/am/?p=34171

թյունների կողմից հետապնդվող շահերի «փնջի» մեծ մասաբաժինն աշխարհիկ բաղադրիչով էր «համեմված», որը, միաժամանակ, ուներ նաև թաքնված զավթողական նպատակ ու տնտեսական շահ:

Կիլիկիայի հայկական պետության տնտեսական կյանքում Խաչակրաց արշավանքները կառավարող և խաչակիրներին օժանդակող կարևոր դերակատարում ունեցող օրդենները երեքն էին[8].

1. Հյուրընկալների (Հիվանդախնամների) օրդենը (ստեղծված 1070 թ.),
2. Տաճարականների օրդենը (ստեղծված 1118 թ.),
3. Տևտոնական օրդենը (ստեղծված 1188 թ.):

Ներքին կառուցվածքային առումով, օրդենները բրգաձև էին, որի վերևում մեծ մագիստրոսն էր (վարպետը), ներքևում՝ ըստ աստիճանակարգի՝ պրիորները, մարշալները, կոմանդորները, գունդստաբլները[9]: Լինելով կիսառազմականացված կառույցներ՝ դրանք գտնվում էին Վատիկանի և պապականության հովանավորության ներքո, հետևաբար, ենթադրվում է, որ ղեկավարվում էին մեկ ընդհանուր կառույցի կողմից: Դրանց հիմնական նպատակը տարածաշրջանում նորաստեղծ կաթոլիկ երկրների սահմաններն ընդարձակելն ու պաշտպանելն էր: Ծրագրային վերջնարդյունքային նպատակն էր նաև Հայկական Կիլիկիայի և տարածաշրջանային բոլոր քրիստոնյա միավորների լատինականացումը կամ ֆրանկացումը (կաթոլիկացումը): Օրդեններն ինքնիշխան և տնտեսապես հզոր միավորներ էին, իսկ Արևմուտքի տնտեսական ու ռազմաքաղաքական կյանքում՝ կարևոր «խաղացողներ»: Ունենալով ֆինանսական փոխշաղկապվածություն տվյալ ժամանակահատվածի ֆինանսական բուրգերի ու կառույցների հետ՝ դրանք ֆինանսավորում ու վարկավորում էին թագավորներին, և Կիլիկիայի հայոց թագավորներն այս առումով բացառություն չէին: Ռազմական ու զավթողական քաղաքականությամբ նրանք ընդարձակում էին իրենց տնտեսական հնարավորություններն ու կարող էին ոչ միայն զենքի ուժով, այլև ֆինանսական միջոցներով նվաճել նոր տարածքներ, բերդեր ու նավահանգիստներ: Սակայն, ամեն ինչ այդքան հարթ չէր Կիլիկիայի թագավորների, պետության և խաչակիրների օրդենների միջև, քանի որ վերջիններս, հաճախ նաև թագավորության համար կենսական պահերին կարող էին փոխել օժանդակության կամ աջակցման վեկտորը, ինչը շատ դեպքերում բերում էր պարզ առճակատման՝ հղի տարաբնույթ վտանգներով: Եվ, փաստորեն, Կիլիկիայի թագավորության կենսընթացքում այս խնդիրն անլուծելի բնույթը ուներ, որի հիմնական պատճառներից մեկն այն էր, որ օրդենների գլխավոր կառավարիչը Հռոմի պապն էր, որն այդպես էլ ի զորու չեղավ ամբողջապես գերիշխելու հայկական թագավորության վրա, քանի որ վերջինս, չնայած թագավորական ու եկեղեցական փաստաթղթային հավաստիացումներին, այդպես էլ չդարձավ կաթոլիկ պետություն:

Պատմությունն արձանագրել է մի շարք դեպքեր, երբ հայոց թագավորները, հաշվի առնելով օրդենների վարքագիծն ու հակաթագավորական քաղաքականությունը, ուղղակի ունեզրկել են նրանց՝ հետ վերցնելով պարգևած գույքը (բերդաքաղաքներ, ամրոցներ ու կալվածքներ), քանի որ վերջիններս, հաշվի առնելով իրենց գլխավոր կառավարչի՝ Հռոմի պապի շահերն ու պահանջները, չեն կատարել իրենց ծառայողական (վասալական) պարտավորությունները[10]: Այդպիսի գործընթացների պարբերականության հետահայաց վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խաչակիր օրդենների վասալական կախվածության հիմնական բաղադրիչը հողն էր, ըստ որի

[8] Բոռնազյան Ս.Վ., Խաչակիր օրդենների և Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական առնչությունների պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», էջ 176-177, https://arar.sci.am/dlibra/publication/187923/edition/170620/content

[9] Այս աստիճանակարգն ինչ-որ մի պահից սկսեց կիրառվել նաև Կիլիկիայի թագավորությունում:

[10] Խնդիրը հատկապես «թեժ» փուլ էր մտնում, երբ խնդրո առակա գույքը, մեկ այլ կաթոլիկ միավորման հետ պատկանելության առումով, վիճահարույց էր համարվում: Այսպես՝ 1199 թ. Լևոն Բ-ն Տրիպոլիի իշխանի հետ ընդհարվում է Անտիոքի գույքային ժառանգության խնդրի շուրջ: Տաճարական օրդենը Հռոմի պապ Ինոկենտիոս Գ-ի կարգադրությամբ պաշտպանում է Տրիպոլիի իշխանի շահը: Արդյունքում Լևոն Բ-ն գրավում է տաճարականներին պարգևած Գաստոն ամրոցը և չի վերադարձնում՝ նույնիսկ պապի միջամտությունից հետո: Նույն բախտին են արժանանում նաև Սելևկե նահանգում Հյուրընկալների (Հիվանդախնամների) օրդենին տրված գույքային միավորները (1220 թ.):

էլ հիմնականում կառուցվում էին իրավահարաբերությունները թագավորության և օրդենների միջև, ինչը նոր մոտեցում էր հայկական ֆեոդալական հողատիրության պատմության մեջ: Դա սկզբունքորեն նմանակում էր եվրոպական երկրների հողատիրական հարաբերությունները: Հետևաբար՝ նվիրվածության ու կարևոր ծառայությունների համար որպես պարգև տրվող նյութական արժեքը ճկուն գործիք էր գրավոր պայմանավորվածությունները պահպանելու առումով և նաև «մտրակ»՝ դրանք չպահպանելու պարագայում, ինչն արտահայտվում էր պարգևը հետ վերցնելու իրավունքի կիրառմամբ: Այսպիսի իրավահարաբերություններն այն էլ խաչակիրների օրդենների պես կիսափակ համակարգերի դեպքում, բացի դրական արդյունքից, չէին կարող չպարունակել նաև ռիսկեր, որոնք բացասաբար կազդեին թագավորության հետագա կենսընթացքի վրա: Հարաբերությունների այս բարդ հանգույցն էլ ավելի էր խճճվում նոր դերակատարների՝ արևմտյան խոշոր առևտրական միավորների ի հայտ գալով, քանի որ տնտեսական խաչմերուկի տրամաբանությունը հուշում էր, որ վերջիններս նույնպես ձգտելու են ամրագրել իրենց ներկայությունը տարածաշրջանային այդ կարևոր հարթակում՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ հողատիրական բնագավառներում:

Հայկական Կիլիկիան՝ որպես միջերկրածովյան առևտրային նոր հարթակ

Ունենալով ծովային ելք դեպի Արևմուտք, ինչպես նաև ձգտելով կամրջի դեր ստանձնել Արևելք-Արևմուտք տնտեսական հարաբերություններում՝ Կիլիկիայի հայկական պետությունն իր գոյության մեկնակետում սկսում է կյանքի կոչել տնտեսական բարենպաստ միջավայրի ստեղծման գաղափարը՝ փորձելով դառնալ արևելյան առևտրային բանավոր պայմանավորվածությունները գերադասող և պարտադիր փաստաթղթային ամրագրման արևմտյան սկզբունքներով առաջնորդվող գործարքների համակցման յուրօրինակ հարթակ: Միջազգային առևտրի և հատկապես Արևելք-Արևմուտք տնտեսական փոխշահավետ համագործակցության տեսանկյունից, Կիլիկյան Հայաստանի փորձի վերլուծությունն արժեքավոր է հատկապես այսօր, երբ մեր պետությունը փորձ է անում դուրս գալու դարերով իր մեջ ներարկված փակուղային տարածք լինելու մտադաջվածքից և վերագտնելու խաչմերուկային կարևորագույն կարգավիճակը:

Ինչպես արդեն նշել էինք, Խաչակրաց արշավանքների ժամանակ մերձավորարևելյան տարածաշրջան տանող երթուղիների որոշ մասը ծովային էր, իսկ այս դեպքում անհրաժեշտ էր տիրապետել տվյալ ժամանակի պահանջներին համապատասխան նավատորմի կամ նավախումբերի: Այդ գործում մեծ դերակատարում ունեին եվրոպական, հատկապես իտալական այն հանրապետությունները, որոնք ձգտում էին առևտրային գերիշխանություն հաստատել դեպի արևելք գնացող ծովային երթուղիների վրա՝ դրանց հատման ցամաքային սահմանաշրջաններում փորձելով ստեղծել արդյունավետ լոգիստիկ ցանց: Այդ տեսանկյունից, Կիլիկյան Հայաստանը, աշխարհագրական առումով, թերևս, ամենահարմարեցվածն էր, քանի որ տվյալ ժամանակահատվածում վերջինս.

- արդեն իսկ ձևավորված պետական միավոր էր և չէր համարվում ակտիվ հակամարտության գոտի,
- խաչակիրների, ասել է թե՝ հավաքական Արևմուտքի հետ ուներ որոշակի հստակեցված հարաբերություններ,
- Արևելքի պետությունների հետ չուներ խորացված առճակատումներ:

Էական էր նաև այն հանգամանքը, որ Խաչակրաց արշավանքները, որոնք ուղղված էին հիմնականում սուլթանությունների դեմ, խաթարել էին տվյալ տարածաշրջանում նախկինում գոյություն ունեցող միջերկրածովյան առևտրային հարթակները, ինչի արդյունքում Վենետիկի, Ջենովայի, Պիզայի և իտալական այլ հանրապետությունների ու ֆրանսիացի առևտրական միավորների ուշադրությունը օբյեկտիվորեն բևեռվել էր Կիլիկյան Հայաստանի վրա: Տարածաշրջանային այս փոխատեղումը վերջինիս հնարավորություն էր տվել էլ ավելի ամրապնդելու իր դիրքը

միջազգային առևտրի հատկապես արևմտյան թևում, որի ֆինանսական բաղադրիչի հիմնական կշիռը Ֆլորենցիայի մեծահարուստ ընտանիքների հիմնած մի քանի բանկերի (Բարդի, Պերուցցի, Մոցցի[11]) միջոցներն էին, որոնք սպասարկում էին արևմտյան խոշոր «խաղացողների», ներառյալ Հռոմի պապի աշխարհաքաղաքական, ռազմական ու տնտեսական ծրագրերն ու ապահովում Արևմուտքի ներկայությունն արևելյան տարածաշրջանում:

Թերևս, այս հանգամանքը, որը տնտեսապես միայն բարերար ազդեցություն էր թողնում հայկական այլընտրանքային պետության կայացման վրա, նույնպես որոշիչ դեր ունեցավ իշխանապետությունից թագավորություն սահուն անցման գործընթացում՝ որպես կարևոր ներազդող գործոն: Այս, ինչպես նաև խաչակիրների ռազմարշավի պարագայում համընկան հավաքական Արևմուտքի ու Հայկական Կիլիկիայի շահերը: Որպես տնտեսական գործոնի կարևորության ապացույց՝ կարելի է նշել նաև այն, որ Կիլիկիայի հայկական թագավորության ամրագրումից ընդամենը մի քանի տարի հետո՝ 1201 թվականին, իրար հաջորդեցին իշխանապետից թագավոր դարձած Լևոն Բ Մեծագործի կողմից Ջենովայի և Վենետիկի հանրապետությունների հետ միջպետական պայմանագրերի կնքման գործընթացները[12]: Ընդ որում, կնքված պայմանագրերում Կիլիկիայի թագավորության դերակատարումը տարբեր էր: Մասնավորապես՝ ջենովացիները փորձում էին օգտվել հայկական պետության հողատիրության կանոններից և ձեռք բերել բնակելի ու առևտրային տարածքներ Սիսում, Մամիստրայում և Տարսոնում՝ ավելի դյուրին դարձնելու համար իրենց մասնակցությունը նոր առևտրային հարթակների ձևավորմանը, իսկ վենետիկցիները թագավորությունը դիտարկում էին որպես առևտրային տարանցիկ միավոր: Անկախ այս ամենից, երկու դեպքում էլ այս գործընթացները տնտեսապես ձեռնտու էին Կիլիկյան Հայաստանի համար, որն այդպիսով էլ ավելի էր բարձրացնում տարածաշրջանային «խաղացողի», իսկ հաճախ նաև «խաղի» կանոններ թելադրողի իր դերն ու վարկանիշը:

Տարանցիկ առևտրային երկրի կարգավիճակն ավելի առարկայացավ ու ամրացավ Հեթում Ա թագավորի տիրապետման ժամանակահատվածում: Նա կարողացավ Մոնղոլական կայսրության հետ կնքել փոխշահավետ համագործակցության պայմանագիր՝ ընդգծելով կայսրության և Արևմուտքի միջև տնտեսական հարթակ լինելու իր կարողությունը: Արդյունքում Մոնղոլական կայսրության առևտրային հիմնական ուղիները, լոգիստիկ նպատակահարմարությամբ պայմանավորված, զարգացան դեպի Կիլիկյան Հայաստան՝ նպաստելով նաև նրան, որ վերջինս, որպես միջերկրածովյան արևելյան ելքի ցամաքային հարթակ, այդ ժամանակահատվածում զերծ մնա մոնղոլական որևէ ասպատակությունից:

Դեռևս Լևոն Բ Մեծագործի տիրապետության ժամանակահատվածում ծովափնյա Այասը՝ այսօրվա եզրաբանությամբ, ձեռք էր բերել միջազգային նավահանգստի կարգավիճակ, իսկ Հեթում Ա-ի օրոք, պայմանավորված մինչև Կիլիկիայի թագավորության պետական սահմաններ Մոնղոլական կայսրության սահմանների ընդլայնմամբ, դարձել տարածաշրջանի խոշոր առևտրային կենտրոններից մեկը: Լինելով Մոնղոլական կայսրության դաշնակիցը՝ Կիլիկիայի թագավորությունը վարել է այնպիսի տնտեսական քաղաքականություն, որի միջոցով կարողացել է դառնալ ապրանքափոխանակման ամենահարմար հարթակը վերջինիս և արևմտյան խոշոր վաճառականների համար՝ գործելով հենց տնտեսական խաչմերուկի տրամաբանությամբ:

Միաժամանակ, իր պետությունում ստեղծված արդյունքն ու բարիքը Կիլիկիայի թագավորությունն իրացնում էր հենց վերոնշյալ հարթակներում: Այս գործընթացում իր կարևոր դերակատարումն ուներ պետության օժանդակությամբ գործող արհեստագործության ինստիտուտը,

[11] Գևորգյան Զ., Աշխարհաքաղաքական գործընթացները և միջազգային առևտուրը Կիլիկյան Հայաստանում (1201-1337 թթ.), ՀՀ ԳԱ Պի, էջ 81-83, https://arar.sci.am/dlibra/publication/308434/edition/283214/content

[12] Նույն տեղում, էջ 84:

որը կարող էր ինքնուրույն բանակցել ու պատվերներ ստանալ ապրանքների հետագա արտադրության ու իրացման համար: Արհեստագործական համքարությունները, որոնք միավորվում էին ըստ մասնագիտացման (մետաղամշակություն, զինագործություն, կաշեգործություն, ոսկերչություն, ձիապահություն), ակտիվորեն մասնակցում էին տարածաշրջանային առևտրին: Ընդ որում, այս ճյուղերի արտադրանքը և Արևմուտքում, և Արևելքում մրցակցային էր՝ թե՛ իր որակական հատկանիշներով և թե՛ արժեքով: Նույնը կարելի է ասել նաև գյուղատնտեսության ու գյուղական համայնքների կայացման և զարգացման մասին: Սա ոչ միայն արհեստագործության ինստիտուտի, այլև պետության զարգացման խթան էր, քանի որ ապրանքների իրացումից ավելանում էին նաև պետական գանձարանի մուտքերը: Սրան զուգահեռ, թագավորությունն իր գործադիր մարմնով (գործակալություններ) վերահսկողության տակ էր պահում ապրանքների ներմուծման ու արտահանման շուկան, գների ու կշիռների (չափի միավորների) սահմանման ընդհանուր քաղաքականությունը՝ սկզբունքորեն հավասարացնելով թե՛ գյուղացիների, թե՛ համայնքային միավորների, թե՛ արհեստագործների և թե՛ խոշոր առևտրականների մրցակցային հնարավորությունները, զերծ պահելով տնտեսական դաշտն անհարկի մենաշնորհներից:

Արտահանվող արտադրանքի հիմնական մասը հումքային ոլորտում բաժին էր ընկնում երկաթին, գունավոր մետաղներին ու շինափայտին: Գյուղատնտեսական ոլորտից պետության մակարդակով իրացվող հիմնական ապրանքատեսակներն էին հացահատիկն ու բուրդը: Միաժամանակ, արևմտյան ուղղությամբ առևտրաշրջանառության մեջ մեծ էր նաև վաճառվող ձիերի կշիռը, քանի որ հատկապես Խաչակրաց արշավանքների միջնամասում խաչակիրներն իրենց ծովային տեղաշարժը չէին ծանրաբեռնում նավերով ձիեր տեղափոխելու գործողությամբ, քանի որ դա և՛ թանկ, և՛ ոչ արդյունավետ գործընթաց էր՝ կենդանիների պահպանման տեսանկյունից: Ավելի նպատակահարմար էր հենց տեղում (ցամաքում) գործող ձիաբուծարաններից գնել ձիեր: Այսպիսի գործարքները նույնպես խրախուսվում էին պետության կողմից և, իհարկե, ապահովում էական մուտքեր դեպի պետական (թագավորական) գանձարան:

Սակայն, տնտեսական տարածաշրջանային աշխուժությունը հետզհետե սկսում էր ուղեկցվել նաև հստակ ձևավորվող ռիսկերով, որոնց ճշգրիտ ախտորոշման, հաշվարկման և կանխարգելիչ միջոցառումների անհրաժեշտության գիտակցմանը հաճախ խանգարում էին ներարքունական ու իշխանական խժդժությունները, որոնց մեջ ակտիվ դերակատարում ուներ նաև ՀԱԵ-ն[13]՝ իր հավակնություններով հաճախ անհարկի մեծացնելով իր մասնակցայնության բաղադրիչը պետության ռազմավարական հայեցակարգի իրականացման ժամանակ: Արդյունքում մարտավարական խնդիրները հաճախ գերակա էին դառնում ռազմավարականի (գործընկերների վեկտորի փոփոխություն, նյութական շահ և այլն) նկատմամբ: Խնդիրը բարդանում էր նաև նրանով, որ Արևմուտքի գերնախագծի իրագործման փուլում նկատվում էր ճահճացման շրջան, երբ նյութական բաղադրիչը, էապես առաջ անցնելով գաղափարականից, դառնում էր գերադասելի և՛ խաչակիր օրդենների, և՛ արևմտյան քաղաքականության տիրույթում:

Նյութական ու պատեհապաշտական մղումներին տուրք տալու հետևանքով շատ շուտով ռազմավարական գերնախագիծն աստիճանաբար ձևախեղվում է, և հետագան ցույց է տալիս աշխարհաքաղաքական այդ գործընթացի գաղափարաբանական սնանկությունն ու կործանարար ազդեցությունը հատկապես հայկական պետության կենսագործունեության վրա: Այս ամենը հանգեցնում է նրան, որ Կիլիկյան Հայաստանը հայտնվում է քաղաքական առևտրի կիզակետում, որը, իհարկե, չէր բխում պետության կայուն զարգացման շահից, այլ ընդհակառակը, նրան տանում

[13] ՀԱԵ՝ Հայ առաքելական եկեղեցի:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Առևտրային իրավահարաբերությունների փաստաթղթային ամրագրումների շարժընթացը Կիլիկիայի թագավորությունում՝ XIII-XIV դարերում[14]

Առևտրային պայմանագրեր, համաձայնագրեր, արտոնագրեր		
Տարի	Պետություն, քաղաք, կազմակերպություն, անհատ	Բովանդակություն
1201 թ.	Ջենովայի Հանրապետություն	Ազատ առևտրի պայմանագիր
1201 թ.	Վենետիկի (Սուրբ Մարկոսի) Հանրապետություն	Առանց տարանցիկ մաքսատուրքի առևտրային պայմանագիր, բացառությամբ Կիլիկիան և Ասորիքը միմյանց հետ կապող Պորտելլա լեռնանցքի:
1215 թ.	Ջենովայի հանրապետություն	Նոր արտոնագրեր
1243 թ.	Մոնղոլական Կայսրություն	Առևտրային համաձայնագիր
1245 թ.	Վենետիկի (Սուրբ Մարկոսի) Հանրապետություն	Արտոնագրերի վերահաստատում
1261 թ.	Վենետիկի (Սուրբ Մարկոսի) Հանրապետություն	Նոր արտոնագրեր
1272 թ.	Վենետիկի (Սուրբ Մարկոսի) Հանրապետություն	Նոր արտոնագրեր
1279 թ.	Հուլավյան Իլխանություն	Տարանցիկ առևտրային համաձայնագիր
1288 թ.	Ջենովայի Հանրապետություն	Առևտրային պայմանագիր
1289 թ.	Պիզայի Հանրապետություն	Առևտրային պայմանագիր
1307 թ.	Վենետիկի (Սուրբ Մարկոսի) Հանրապետություն	Նոր արտոնագիր
1314 թ.	Մոնպելիեի վաճառականներ	Առևտրային արտոնագրեր
1321 թ.	Վենետիկի Հանրապետություն	Նոր առևտրային պայմանագիր
1321 թ.	Մոնպելիեի վաճառականներ	Առևտրային արտոնագրի վերահաստատում
1330 թ.	Սիցիլիայի թագավորություն	Առևտրային պայմանագիր
1270-1335 թթ.	Մարսել, Նարբոն, Պրովանս (վաճառականներ)	Մաքսատուրքի արտոնություններով առևտրային պայմանագրեր

էր դեպի անկում:

Տնտեսական խաչմերուկի լույսն ու սվրերը

Կիլիկյան թագավորության ժամանակաշրջանում, երբ տարածաշրջանը հարափոփոխ էր, իսկ թագավորությունը՝ կայուն, էապես ուժեղացավ վերջինիս՝ որպես խաչմերուկ դերակատարումը, որի արդյունավետությունը պայմանավորված էր պետական վերահսկողության հստակ գործիքակազմով: Սեփական պետության սահմաններում Արևմուտքի և Արևելքի տնտեսական շահերը կառավարելու նպատակով Կիլիկիայի հայոց թագավորները, սկսած Լևոն Բ Մեծագործից, տնտեսական և առևտրային հարաբերությունները փորձեցին կառուցել իրավական հենքի վրա, որը «միս ու արյուն» էր ստանում շահագրգիռ կողմերի հետ առևտրային պայմանագրերի ու համաձայնագրերի կնքմամբ:

Աղյուսակ 1-ում, ժամանակագրական առումով, ներկայացված են ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան պետական միավորների հետ կնքված առևտրային պայմանագրերն ու տրամադրված արտոնագրերը, որոնք տվյալ ժամանակաշրջանի համար իրենց բնույթով նորարարական երևույթներ էին:

Այս պայմանագրերից ու արտոնագրերից յուրաքանչյուրի կնքմանը, որպես

[14] Աղյուսակը կազմվել է ըստ հետևյալ աղբյուրների. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 413-414, Գևորգյան Զ., Աշխարհաքաղաքական գործընթացները և միջազգային առևտուրը Կիլիկյան Հայաստանում (1201-1337 թթ.), ՀՀ ԳԱԱ ՊԻ, https://arar.sci.am/dlibra/publication/308434/edition/283214?language=hye

կանոն, նախորդել են տարածաշրջանային լրջագույն գործընթացներ, որոնք էլ հիմք են ստեղծել, որ Կիլիկյան Հայաստանը, սեփական շահի դիտանկյունից, կատարի ռազմավարական քայլեր, որոնք, իրենց հերթին, հնարավորություն են ընձեռել վերջինիս շուրջ մեկ ու կես դար տարածաշրջանում հանդես գալու որպես կարևոր «խաղացող» ու դերակատար, առևտրատնտեսական լրջագույն գործընթացների ակտիվ մասնակից և, ինչ-որ առումով, նաև «խաղի կանոններ» թելադրող: Հարավից ու արևելքից գտնվելով Եգիպտական մամլուքների ու Իկոնիայի սելջուկների մամլիչի արանքում, որոնք, ի դեպ, այնքան էլ շահագրգռված չէին Կիլիկիայի թագավորության հզորացմամբ ու հատկապես նրա՝ որպես խաչմերուկի կառավարչի կարգավիճակի ամրապնդմամբ, Կիլիկիայի կառավարիչները տվյալ ժամանակահատվածում կարողացան իրականացնել նոր մշակված տարանցիկ ուղիների անխափան ու անվտանգ աշխատանքը՝ ստանալով դրանից բխող թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական օգուտներ: Մասնավորապես՝ միայն Այաս նավահանգստից թագավորության գանձարան մուտքագրված տուրքերի չափը տարեկան կազմում էր մի քանի մլն ֆրանկ[15], որն արդյունքում ուղղվում էր, նախ և առաջ, պետության անվտանգության երաշխավորի՝ բանակի պահպանմանն ու զարգացմանը: Արտոնագրայինին զուգընթաց, իրականացվում էր նաև տարանցիկ մաքսատուրքերի վերացման կամ դրանց նվազեցման քաղաքականություն, որը շահագրգռում էր հատկապես արևմտյան պետությունների վաճառականներին՝ ընտրելու այն ճանապարհները, որոնք անցնում էին Կիլիկիայի թագավորության տարածքով: Այդուհանդերձ, բարիքի կողքին առկա էր նաև չարիքը՝ ի դեմս Կիլիկիայի հանդեպ Իկոնիայի սուլթանության ռազմական ակտիվության: Դրա շարժառիթը Վենետիկի ու Ջենովայի հանրապետությունների արտոնագրված գործունեությունն էր տարածաշրջանում, ինչը խիստ անհանգստացնում էր սելջուկներին, քանի որ այդպիսով էապես թուլանում էր սուլթանության ներազդեցությունը: Փնտրելով այս թնջուկից դուրս գալու ելք՝ Կիլիկիան աշխուժացրեց դաշնակցային ու տնտեսական հարաբերությունները Մոնղոլական կայսրության հետ, որի քաղաքական ու տնտեսական ծրագրերում Իկոնիայի սելջուկյան այդ միավորը խանգարիչ գործոն էր: Այս հակամարտությունն աշխատեց հօգուտ Կիլիկիայի թագավորության, իսկ դրա վերջնարդյունքը 1243 թ. Քյոսեդաղի ճակատամարտում մոնղոլական զորքերից Իկոնիայի սուլթանության կրած ջախջախիչ պարտությունն էր[16], որով էլ ավարտվեց վերջինիս գերիշխանությունը փոքրսիական տարածաշրջանում: Կիլիկիայի թագավորության՝ որպես խաչմերուկ դերակատարմանը նպաստեցին նաև Մոնղոլական կայսրության «դուստր ձեռնարկության»՝ Հուլավյան իլխանության ստեղծումն ու հզորացումը XIII դարի միջնամասում[17]: Վերջինս իր արևմտյան դաշնակիցների հետ առևտրային հարաբերություններ էր հաստատում սահմանակից Կիլիկյան Հայաստանի միջոցով և, գիտակցելով, որ Կիլիկյան Այաս նավահանգստով դեպի արևմուտք տանող ծովային ճանապարհն ամենակարճն ու ապահովն է իր ռազմավարական նպատակների իրագործման համար, կատարեց դարակազմիկ փոխատեղում Արևելքի քարավանային երթուղում, որի արդյունքում Հնդկաստանից և Չինաստանից Պարսից ծոցով բերվող ապրանքների քարավանային ճանապարհների արևելյան հանգրվանային վերջնակետը Բաղդադից տեղափոխվեց դեպի իլխանության մայրաքաղաք Թավրիզ, որը, ըստ էության, իր վրա վերցրեց Բաղդադի՝ դարերով ձևավորված միջազգային առևտրային հարթակի գործա-

[15] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 415:

[16] Թինոյան Դ., Կիլիկիայի Հայոց Թագավորության ներքաղաքական և արտաքին քաղաքական իրադրությունը 1240-ական թթ., ՀՀ ԳԱԱ, «Լրաբեր հասարակական գիտությունների» 1(646), էջ 127, http://www.old.ysu.am/files/kilikiayi-haykakan-tagavorutyun.pdf

[17] Չինգիզ խանի թոռը՝ Հուլավուն, հաստատվելով Իրանում, հիմնում է մոնղոլական տերության ուլուսներից (հողաբաժին) մեկը՝ իլխանությունը, որ 1261 թ. մոնղոլական մեծ խան Խուբիլան (1259-1294 թթ.) ճանաչում է որպես ինքնուրույն պետություն:

ռույթները: Միաժամանակ, շնորհիվ Կիլիկիայի թագավորության վարած արտաքին տնտեսական քաղաքականության, արտոնագրատեր ֆրանսիացի ու իտալացի վաճառականները, Կիլիկիայի և Հուլավյան իլխանության միջև կնքված տարանցիկ առևտրային պայմանագրի համաձայն, հնարավորություն ունեցան ազատ առևտրական գործունեություն ծավալելու նաև իլխանության տարածքում: Կիլիկիայի թագավորության տնտեսական կյանքի զարգացման համար բարենպաստ այս գործընթացը ևս ուժեղ հակազդեցության արժանացավ մամլուքյան Եգիպտոսի կողմից, քանի որ Այաս նավահանգստի միջազգային վարկանշի աճն ուղղակի կործանարար կարող էր լինել Ալեքսանդրիա նավահանգստի համար, որը մինչ այդ Արևելքի հիմնական առևտրային ճանապարհի միջերկրածովյան ելքն էր դեպի Արևմուտք: Եգիպտոսի համար այս խնդիրը, տնտեսականից բացի, քաղաքական ու անվտանգային նշանակություն ուներ, քանի որ վերջինս չուներ հացահատիկի բավարար պաշար, երկրում զարգացած չէր մետաղամշակումը, և այդ ռազմավարական ապրանքները (հացահատիկ ու զի նամթերք) Ալեքսանդրիայով հայտնվում էին մամլուքյան սուլթանության վերահսկելի տարածքում՝ առանց մեծ ճիգերի: Այասի հայկական մնալը, հատկապես ռազմավարական ապրանքների ձեռքբերման դիտանկյունից, Եգիպտոսի համար ուղղակի դառնում էր գոյաբանական խնդիր, ինչն էլ, ինչպես ցույց տվեց պատմությունը, ի վերջո դարձավ թագավորության անկման հիմնական պատճառներից մեկը:

Կիլիկյան թագավորության՝ տարածաշրջանային երկրների ու կազմավորումների հետ ունեցած տնտեսական հարաբերությունների հետահայաց վերլուծությունը բացահայտում է վարվող քաղաքականության թերությունները: Մասնավորապես՝ Արևելք-Արևմուտք հարաբերություններում, ակտիվ ու հաջողված դերակատարումից ոգևորված, Կիլիկիայի կառավարիչները պարզապես անտեսեցին իրենց հարավային հարևանի՝ մամլուքյան Եգիպտոսի հետ փոխշահավետ հարաբերությունների կարգավորման կենսական անհրաժեշտությունը, և քաղաքական «առևտրի» շրջանակում կատարված, թերևս, ոչ ճշգրիտ հաշվարկները մրցակցային պայքարը տնտեսական դաշտից ուղղորդեցին դեպի ռազմական կործանարար առճակատում: Սա նույնքան բացասական նախադրյալ էր, որքան Կիլիկիայի անկումը նախապատրաստող մնացած գործոնները: Միաժամանակ, տնտեսական ու հատկապես արտոնագրային քաղաքականության վարման առումով, որպես քաղաքական «առևտրի» բացասական վերջնարդյունք, կարելի է համարել տարածաշրջանում գերակայություն ստանալու համար մրցակցային թեժ պայքարի դուրս եկած իտալական հանրապետությունների նկատմամբ ունեցած չհաշվեկշռված մոտեցումը: Իսկ այդ առճակատումը փոխշաղկապված էր Արևմուտքի աշխարհաքաղաքական ծրագրի գաղափարաբանական ձևախեղումների հետ, որն ի վերջո հանգեցրեց իտալական երկու հանրապետությունների՝ Ջենովայի և Վենետիկի միջև ծովային պատերազմի սկսմանը[18]: Այս դեպքում արդեն, անկախ պատերազմի վերջնարդյունքից, Կիլիկյան Հայաստանը դարձավ ոչ թե տնտեսական առողջ մրցապայքարի հարթակ, այլ ուղղակի տնտեսական պատերազմների թատերաբեմ՝ բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Նույնը վերաբերում է նաև խաչակիրների օրդենների հետ հարաբերությունների պատմությանը, ինչն ինչ-որ պահի ռազմաքաղաքական գործընկերային համատեքստից տեղափոխվեց տնտեսական շահի տիրույթ՝ դրանով իսկ դառնալով պատեհապաշտական ու խոցելի: Ի վերջո, քաղաքական «առևտրում» թերհաշվարկներն ու ոչ ճշգրիտ ռազմավարությունը հանգեցրին բարեկամ երկրների հետ կապերի թուլացմանը, որը տրամաբանորեն ակտիվացրեց չարակամ երկրների ռազմական նկրտումները, որոնք իրենց բնույթով գոյաբանական սպառնա-

[18] 1256 թ. սկսվում է ջենովա-վենետիկյան առաջին պատերազմը (1256-1270 թթ.), որը պատմությանը հայտնի է Սուրբ Սաբա անվանումով:

լիք էին Կիլիկիայի թագավորության համար:

Ընդհանրապես, պետության կայացման ու կենսընթացքի հետահայաց վերլուծությունում չափազանց կարևոր է Կիլիկյան Հայաստանի բացասական փորձի ուսումնասիրումը, քանի որ իրատեսական գաղափարների կյանքի կոչման ճանապարհին արտաքին ու ներքին գործոնների ներազդման չափաբաժինների թերի հաշվարկումը և տարաբնույթ իրավիճակներում այլընտրանքային լուծումներ չունենալու հանգամանքը նախ՝ կարող էին ձևախեղել գաղափարը, իսկ ապա նաև անհնար դարձնել դրա իրագործումը՝ պայմանավորված ներքին ու արտաքին «բարի կամեցող» ուժերի փոխլրացնող, գործուն ջանքերով:

Կիլիկիայի թագավորության պարագայում բացասական ներազդող գործոններ առկա էին թե՛ արտաքին, թե՛ ներքին միջավայրում:

Արտաքին միջավայրում առկա բացասական գործոններից էին.

- արևմտյան երկրների աշխարհաքաղաքական ծրագրի գաղափարական ձևախեղումն ու Խաչակրաց արշավանքների անհաջող վերջնարդյունքը, որոնք հանգեցրին քրիստոնեական բաղադրիչ ունեցող կազմավորումների (դքսություն, իշխանապետություն, թագավորություն) էական թուլացմանը, իսկ ապա նաև տարածաշրջանային քաղաքական թատերաբեմից իսպառ անհետացմանը,
- եգիպտական մամլուքների զավթողական ու թշնամական վարքագիծը,
- դաշնակից համարվող կայսրության թուլացումն ու թաթարական բաղադրիչի մեծացումից բխող վտանգները,
- միջինասիական տափաստաններից Սև ծովի արևելյան ափեր և Վանի տարածաշրջան հասած, քոչվորականի հոգկերտվածք ունեցող թուրքմենական օղուզների (կարա-կոյունլու)[19] կենսաբանական աշխուժացումը,
- արևմտյան խոշոր խաղացողների (Ֆրանսիա, Անգլիա) միջև սկսված հարյուրամյա պատերազմը,
- մի քանի ծանր պարտություն կրած խաչակրաց օրդենների ու արևմտյան վաճառականների կողմից երկակի չափանիշների կիրառումը և այլն:

Ներքին միջավայրում առկա բացասական գործոններից էին.

- արքունիքում պատեհապաշտ ու նյութապաշտ խավի աշխուժացումը,
- պալատական չդադարող խժդժություններն ու դավադրությունները,
- ծանր որոշումներ ընդունելու պահին ՀԱԵ-ի ոչ թե ազգապահպան, այլ եկեղեցապահպան գործունեությունը,
- չհամակարգված գործողություններն ու խորացող հակասություններն արքունիքում և այլն:

Վերոնշյալ գործոններից բխող խնդիրներն ի վերջո դարձան ոչ միայն պետության հետագա զարգացմանը սպառնացող, այլև գոյաբանական վտանգ:

Կիլիկիայի թագավորության տնտեսական քաղաքականության և մասնավորապես՝ միջպետական տնտեսական հարաբերությունների պատմության վերլուծությունը, տնտեսական խաչմերուկ և Արևմուտք-Արևելք տարանցիկ շղթայի շահեկան միջնօղակ դառնալու տեսանկյունից, կարևորվում է հենց մեր օրերում, երբ Հայաստանի Հանրապետությունը ձգտում է իր տնտեսական հայեցակարգը կտրուկ կերպով փոխել՝ անտրամաբանական «փակուղայինից» դարձնելով տրամաբանական «խաչմերուկային»:

Հաջորդիվ՝ վերջին մասը:

[19] Կարա-կոյունլու - թարգմանաբար՝ սև ոչխարներ: Թուրքմենական օղուզ ցեղախմբերի հավաքական անվանումն է, որոնք բազմացան ու տարածվեցին Հայկական լեռնաշխարհում՝ հետագայում դառնալով օսմանցի թուրքերի հիմնական կենսաբանական միջուկը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, Երևան, 1979, 719 էջ:
2. Տեր-Պետրոսյան Լևոն, Խաչակիրները և հայերը, հատոր Բ, Երևան, 2007, 672 էջ:
3. Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում ԺԲ և ԺԴ դարերում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 318 էջ:
4. Բոռնազյան Ս. Վ, Խաչակիր օրդենների և Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական առնչությունների պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», https://arar.sci.am/dlibra/publication/187923/edition/170620/content
5. Կիլիկյան Հայաստանի տնտեսությունը. հասարակական-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում, https://akunq.net/am/?p=34171
6. Գևորգյան Զ, Աշխարհաքաղաքական գործընթացները և միջազգային առևտուրը Կիլիկյան Հայաստանում (1201-1337 թթ.), ՀՀ ԳԱ ՊԻ, https://arar.sci.am/dlibra/publication/308434/edition/283214/content
7. Թինոյան Դ., Կիլիկիայի հայոց թագավորության ներքաղաքական և արտաքին քաղաքական իրադրությունը 1240-ական թթ., ՀՀ ԳԱԱ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1(646), http://www.old.ysu.am/files/kilikiayi-haykakan-tagavorutyun.pdf

Амазасп ГАЛСТЯН

Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

УРОКИ КИЛИКИИ: ЧАСТЬ ПЯТАЯ

Благодаря своему географическому положению, Армянское государство Киликия находилось на пересечении сухопутных и морских торговых путей Восток-Запад. Иными словами, он исполнял роль транзитного узла и поэтому в контексте построения и реализации экономической политики княжества, а затем и королевства этот фактор считался наиболее важным.

Особенно в период Киликийского королевства основным портом торговых путей, связывающих Восток с европейскими государствами и городами через Средиземное море, стал Киликийский Айас, экономическое значение которого оценивалось как с геополитической, так и с военно-политической точки зрения.

Как перекресток, роль Киликийской Армении стала более ценной в период крестовых походов, когда по средиземноморскому маршруту стали осуществляться перевозки солдат, участвовавших в военных действиях, и грузов` необходимых для их существования (продовольствие-оружие-боеприпасы). В бесперебойной работе этого морского пути были очень заинтересованы ряд итальянских государств, известных своими торговыми флотами (Венеция, Генуя), а также купеческие группы южнофранцузских городов (Марсель, Нарбонна, Монпелье).

В пятой части цикла статей исследована экономическая политика, реализуемая Киликийской Арменией, исходя из того, что в данный период геополитические, военные и экономические процессы Запад-Восток были направлены на формирование новых правил «игры». При этом была предпринята попытка раскрыть стратегические и тактические шаги, вытекающие из проводимой государством внешней и внутренней экономической политики, их направленность и целевые акценты, выделяя как положительный, так и отрицательный опыт.

Ключевые слова: *Киликийское королевство, экономическая политика, международная торговля, торговый перекресток, транзитные пути*

Hamazasp GALSTYAN
Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics

CILICIA LESSONS: PART FIVE

Due to its geographical location, the Armenian state of Cilicia was located at the intersection of land and sea trade routes East-West. In other words, it played the role of a transit hub and therefore, in the context of the construction and implementation of the economic policy of the principality, and then the kingdom, this factor was considered the most important.

During this period, the main port of trade routes connecting the East with European states and cities across the Mediterranean Sea became Cilician Aias, the economic importance of which was assessed both from a geopolitical and military-political point of view.

As a crossroads, the role of Cilician Armenia became more valuable during the period of the Crusades, when the Mediterranean route began to transport soldiers participating in hostilities and the cargo necessary for their existence (food, weapons, ammunition). A number of Italian states, known for their merchant fleets (Venice, Genoa), as well as merchant groups of southern French cities (Marseille, Narbonne, Montpellier) were very interested in the uninterrupted operation of this sea route.

The fifth part of the series of articles examines the economic policy implemented by Cilician Armenia, based on the fact that in this period the geopolitical, military and economic processes of the West-East were aimed at forming new rules of the "game". At the same time, an attempt was made to reveal the strategic and tactical steps arising from the foreign and domestic economic policies pursued by the state, their direction and target accents, highlighting both positive and negative experiences.

Keywords: *Kingdom of Cilicia, economic policy, international trade, trade intersection, transit routes*